ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԱՅԵՑԱԿԱՐԳ
ԵՊՀ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ՀՈՒՄԱՆԻՏԱՐ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ
2026-2030թթ.

Նաթելլա Սերոժի Գրիգորյան

պատմական գիտությունների թեկն., դոցենտ
հայոց պատմության և հասարակագիտության ամբիոնի դոցենտ
հումանիտար գիտությունների ֆակուլտետի դեկանի հավակնորդ

Իջևան-2026

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽԱԲԱՆ 3

1. Որակյալ կրթության ապահովում 5

2. Գիտահետազոտական գործունեություն.....8

3. Համալսարանական միջավայրի շարունակական զարգացում.....10

4. Մարդկային ռեսուրսների զարգացում 11

5. Հասարակության հետ տարվող աշխատանքներ և մատուցվող ծառայություններ 13

6. Ուսանողական կառույցների հետ համագործակցություն 15

ՆԱԽԱԲԱՆ

Սույն ծրագիրը մշակվել է՝ հիմք ունենալով ԵՊՀ և ԵՊՀ ԻՄ կանոնադրությունները, ԵՊՀ և ԵՊՀ ԻՄ զարգացման ռազմավարական ծրագրերը, ԵՊՀ ԻՄ հումանիտար գիտությունների ֆակուլտետի կանոնակարգը:

Հումանիտար գիտությունների ֆակուլտետը (այսուհետև՝ Ֆակուլտետ) ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի գիտակրթական գործունեություն իրականացնող հիմնական ստորաբաժանումներից է, որը գործում է մասնաճյուղի գործունեության սկզբից ևեթ՝ 1994 թ.-ից, երբ ՀՀ կառավարության որոշմամբ Իջևանի տարածաշրջանային քոլեջը վերակազմավորվեց որպես ԵՊՀ Իջևանի մասնաճյուղ՝ առաքելություն ունենալով բավարարելու ՀՀ հյուսիսարևելյան տարածաշրջանի կադրային պահանջները, պատրաստելու կայուն գիտելիքներով, բազմակողմանի կրթություն ստացած, ազգանպաստ գործունեությամբ զբաղվող մասնագետներ, կասեցնելու սահմանամերձ շրջաններից երիտասարդության արտահոսքը:

Ֆակուլտետը իր գործունեությունը ծավալում է՝ առաջնորդվելով ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի առաքելությամբ, այն է՝ գիտելիքի ստեղծում, առավելապես փոխանցում և տարածում հայագիտության, հումանիտար և սոցիալ-տնտեսական գիտությունների ուղղություններով և պահպանվելով Մայր բուհի և Մասնաճյուղի հիմնարար արժեքները:

Ֆակուլտետը ձգտում է տրամադրելու աշխատաշուկայում պահանջված բակալավրական ու մագիստրոսական որակյալ կրթական ծրագրեր, իրականացնելու նորարարական ուսանողակենտրոն ուսուցում, խրախուսում է կատարելության սկզբունքները սովորողների և աշխատողների շրջանում: ԵՊՀ ԻՄ հումանիտար գիտությունների ֆակուլտետը ձգտում է դառնալու այնպիսի կառույց, որը՝

- ուսանողներին առաջարկում է համակողմանի գիտելիք, կարողություններ և հմտություններ ապահովող կրթական ծրագրեր՝ խարսխված հետազոտության, ստեղծագործ աշխատանքի և նորարարության վրա և համահունչ Եվրոպական բարձրագույն կրթության տարածքի հիմնարար սկզբունքներին,
- ապահովում է ուսանողների՝ բարոյական, ազգային և համամարդկային արժեքների ոգով դաստիարակումը,

- մատչելի է և ընտրության լայն հնարավորություններ է ընձեռում հասարակության ամենատարբեր շերտերին,
- ուսանողներին տրամադրում է բարձրորակ կրթություն ստանալու ժամանակակից ենթակառուցվածքներ և բարենպաստ միջավայր:

Տարիների ընթացքում ֆակուլտետի կառուցվածքում կատարվել են մասնակի փոփոխություններ: Հումանիտար գիտությունների ֆակուլտետում այժմ գործում են հետևյալ ամբիոնները.

- **Հայոց պատմության և հասարակագիտության,**
- **Մանկավարժության և հոգեբանության,**
- **Հայոց լեզվի և գրականության,**
- **Օտար լեզուների:**

Ֆակուլտետի կազմում 2025թ. հոկտեմբերից գործում է նաև Հոգեբանական, ուսումնախորհրդատվական կենտրոնը:

Ֆակուլտետն իրականացնում է բարձրագույն մասնագիտական կրթություն յոթ բակալավրիական կրթական ծրագրերով («Պատմություն», «Հայոց լեզու և գրականություն», «Անգլերեն և գրականություն», «Ֆրանսերեն և գրականություն», «Ռուսերեն և գրականություն», «Հոգեբանություն», «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա») և մեկ մագիստրոսական կրթական ծրագրով («Դպրոցական մանկավարժություն և մեթոդիկա»):

Ֆակուլտետի կրթական ծրագրերը համահունչ են ԵՊՀ ԻՄ առաքելությանը, մանրամասն նկարագրված են՝ ըստ շնորհվող որակավորումների ակնկալվող ուսումնառության արդյունքների:

Հումանիտար գիտությունների ֆակուլտետը, որպես որակյալ մասնագետների պատրաստման և մտավոր աշխատանքի կազմակերպման կառույցի կարևոր հանգույց, պետք է նախևառաջ կենտրոնանա մի շարք գործընթացների վրա, որոնց համադրությամբ հնարավոր կլինի առավել արդյունավետ իրականացնել Մասնաճյուղի առաքելությունը և ձգտել սահմանված տեսլականին:

Համալսարանական գործընթացներից առավել կարևորվում են՝

1) որակյալ կրթության ապահովումը,
2) գիտահետազոտական գործունեության ակտիվացումը,
3) համալսարանական միջավայրի շարունակական զարգացումը և արդյունավետ աշխատանքային պայմանների ապահովումը,
4) մարդկային ռեսուրսների զարգացումը,
5) հասարակության հետ տարվող աշխատանքների և մատուցվող ծառայությունների բարելավումն ու ընդլայնումը,

6) ուսանողական կառույցների հետ համագործակցությունը:

Այժմ, երբ աշխատանքներ են տարվում Ակադեմիական քաղաքի ստեղծման և մարզային բուհերի կենտրոնացման ուղղությամբ, մասնաճյուղը և առաջին հերթին հումանիտար գիտությունների ֆակուլտետը պետք է ցուցադրեն իրենց առավել ակտիվ դերակատարումը՝ Տավուշի և հարակից մարզերի համար որակյալ կադրերի պատրաստման, հումանիտար ուղղվածության տարաբնույթ հետազոտությունների, վերլուծությունների իրականացման ուղղությամբ՝ առանձնահատուկ մասնակցություն ունենալով պետական և մասնավոր հատվածների խնդիրների լուծման գործընթացին: Այդ նպատակով պետք է կայուն գործընկերային հարաբերություններ ձևավորել պետական կառավարման մարմինների, դպրոցների, տարբեր կազմակերպությունների, հասարակական տարաբնույթ խմբերի, տեղական, հանրապետական և միջազգային գիտակրթական հաստատությունների հետը՝ ամրապնդելու կրթություն-հետազոտություն- նորարարություն եռամիասնությանը:

1. Որակյալ կրթության ապահովում

Ֆակուլտետի առաջին ռազմավարական նպատակն է՝ կրթության բովանդակության և մեթոդաբանության արդիականացումը, որին հասնելու համար նպատակահարմար ենք համարում հետևյալ գործողությունները.

- Կրթական ծրագրերի շարունակական բարելավում և արդիականացում, ծրագրերի կառուցվածքային և բովանդակային բարեփոխումների իրականացում՝ որակավորումների ազգային շրջանակին և աշխատաշուկայի արդի պահանջներին համապատասխան, Բարձրագույն կրթության և գիտության մասին ՀՀ նոր օրենքի դրույթներին համահունչ:
- Ուսանողներին անհատական կրթական հետագիծ առաջարկող կրթական ծրագրերի ներդնում, լսարանային և ինքնուրույն աշխատանքի օպտիմալ համամասնության սահմանում, կրթական ծրագրերի բաղադրիչների միջև փոխկապակցության և փոխազդեցության շարունակական զարգացում:
- Միջազգային և հանրապետական առաջատար բուհերի կրթական ծրագրերի համեմատական վերլուծության (բենչմարքինգի) պարբերական իրականացում:
- Ուսանողների կարողությունների և հմտությունների ձևավորման նոր մեխանիզմների գործարկում:
- Ուսանողների համար արտալսարանային աշխատանքների կազմակերպում:

- Կրթական վերջնարդյունքների ձեռքբերումը գնահատող չափանիշների և դրանց գնահատման մեթոդների հստակեցում և կիրարկում:
- Ուսանողի լրիվ և մասնակի բեռնվածությամբ անհատականացված ճկուն ուսումնառության ծրագրերի մշակում և փորձարկում՝ Բարձրագույն կրթության և գիտության մասին ՀՀ նոր օրենքի դրույթներին համահունչ:
- Ակադեմիական ազնվության պահպանման մեխանիզմների և գործիքների կիրարկման ընդլայնում, գրագողության դեմ պայքարի միջոցների բազմազանեցում, ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի ներմասնաճյուղային հայալեզու թվայնացված տվյալների բազայի ստեղծում:
- Ուսանողների ինքնուրույն աշխատանքների բեռնվածության արդյունավետ օգտագործման և արդյունքների հաշվառման/չափման մեխանիզմների ներդրում, ինքնուրույն բաղադրիչների հանձնարարությունների չափանիշների մշակում և կիրակում:
- Դասավանդման, ուսումնառության և գնահատման ժամանակակից, ինտերակտիվ և տեխնոլոգիապես հագեցած մեթոդների ներդրում:
- E-learning ուսուցման էլեկտրոնային կառավարման համակարգի գործիքակազմի լիարժեք կիրառում դասավանդման և ուսումնառության գործում:
- Միջառարկայական ավարտական աշխատանքների իրականացման պրակտիկայի ներդնում՝ գիտական մեկից ավել ուղղություններ ներկայացնող ղեկավարների առկայությամբ:
- Ուսանողների ներգրավվում ֆակուլտետում իրականացվող գիտակրթական աշխատանքներին:
- Փոխանակման ծրագրերի ընդլայնում, ինչպես ուսանողների, այնպես էլ դասախոսների համար, ինչպես մեր ուսանողների և դասախոսների արտասահմանում կրթությունը շարունակելու, այնպես էլ այլ բուհերից ուսանողներ և դասախոսներ հյուրընկալելու առումով:
- Ամառային և աշնանային դպրոցների կազմակերպման պրակտիկայի զարգացում, ինչպես մեր, այնպես էլ՝ հայաստանյան և արտասահմանյան ուսանողների ու դասախոսների համար:
- Դիմորդների հետ տարվող աշխատանքների բարելավում, կրթական հնարավորությունների, մասնագիտական զարգացման և կարիերայի հեռանկարների վերաբերյալ իրազեկում:

- Մանկավարժության և հոգեբանության ամբիոնի պրոֆեսոր Ռ.Աղզումցյանի խմբագրությամբ ստեղծված Մասնագիտական կողմնորոշման ուղեցույցով և Հոգեբանություն կրթական ծրագրերի ուսանողների աջակցությամբ մարզի դպրոցներում մասնագիտական կողմնորորշմանը աջակցող ծրագրերի իրականացում:
- Բարձր առաջադիմություն ունեցող դիմորդների ներգրավման նպատակով առարկայական մրցույթների և օլիպիադաների, աշակերտների համար դեպի ֆակուլտետ այցելությունների և շրջայցերի կազմակերպում, ֆակուլտետի բարձրակարգ մասնագետների կողմից դասախոսությունների կազմակերպում մարզի աշակերտների համար, ինչպես համալսարանում, այնպես էլ՝ դպրոցներում, ըստ կրթական ծրագրերի մասնագիտական տոնական միջոցառումների կազմակերպում համալսարանում, միասնական քննությունների ձևանմուշով ավարտական դասարանների սովորողների համար թեստավորման անցկացում:
- Գործող կրթական ծրագրերում օտարալեզու դասընթացների իրականացման պրակտիկայի լավարկում և արտասահմանցի ուսանողների ներգրավման համար օտարալեզու կրթական ծրագրերի իրականացման նախապատրաստական աշխատանքների կազմակերպում:
- Գրավիչ ու աշխատաշուկայի պահանջները բավարարող նոր մասնագիտական, մասնավորապես, մագիստրոսական կրթական ծրագրերի ներդրում:
- Արտաքին շահակիցների՝ գործատուների հետ կապերի ամրապնդում և նոր կապերի ստեղծում, ինչը կնպաստի կրթական ծրագրերի արդիականացմանը և շրջանավարտների մրցունակության բարձրացմանը:
- Համատեղ կրթական ծրագրերի ներդրման աշխատանքների կազմակերպում, որի շնորհիվ պատրաստված մասնագետները կստանան կրկնակի դիպլոմներ:
- Ուսանողների մասնագիտական պրակտիկաների վայրերի ցանկի թարմացում, համալրում և ընդլայնում:

«Պատմություն», «Հայոց լեզու և գրականություն», «Անգլերեն և գրականություն», «Ռուսերեն և գրականություն», «Ֆրանսերեն և գրականություն» կրթական ծրագրերի ուսանողների և ծրագրերը սպասարկող դասախոսական կազմի համար մեծ հնարավորություններ է ստեղծում Վիքիմեդիա Հայաստան ՀԿ-ի հետ ունեցած համագործակցությունը, որը առաջիկա տարիների ներկայացնելու է Վիքիպեդիայում հայոց պատմությանը, մշակույթին և արվեստին վերաբերող

հոդվածների բարելավում, պատրաստում, այդ հոդվածների թարգմանությունների ապահովում, որը հետազոտական և պրակտիկ աշխատանքի մեծ դաշտ է տալու, ինչպես ուսանողների, այնպես էլ դասախոսների համար: Այս գործընթացը մի կողմից կլինի ծառայություն հասարակությանը, մյուս կողմից դասախոսներին կտրվեն դրամական խրախուսանքներ:

«Հոգեբանություն» կրթական ծրագրի բարելավմանը, ուսանողների մասնագիտական պրակտիկաների արդյունավետության բարձրացման գործում աջակցելու է նոր ստեղծված Հոգեբանական, ուսումնախորհրդատվական կենտրոնը, որի շրջանակներում կազմակերպվում են ինչպես անհատական, այնպես էլ խմբային տարատեսակ խորհրդատվությունների, վերապատրաստման դասընթացներ:

«Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» բակալավրիական և «Դպրոցական մանկավարժություն և մեթոդիկա» մագիստրոսական կրթական ծրագրերի պրակտիկաների կազմակերպման համար նախատեսվում է սերտ համագործակցություն Դիլիջանի կենտրոնական դպրոցի հետ, որի գործադիր տնօրենը ընդգրկվել է ծրագրերի ամփոփիչ ատեստավորման հանձնաժողովում:

Կրթական ծրագրերի բարելավման համար նախատեսվում են նաև պայմանագրերի կնքում ՀՀ ԳԱԱ Պատմության, Հայոց լեզվի, Գրականության, ԵՊՀ Հայագիտության ինստիտուտների հետ՝ ուսանողների պրակտիկաների կազմակերպման համար:

2. Գիտահետազոտական գործունեություն

Ֆակուլտետի երկրորդ ռազմավարական նպատակը գիտահետազոտական գործունեության ակտիվացումը և դրա արդյունքների բարելավումն է:

Հումանիտար գիտությունների ֆակուլտետն ունի մարդկային բավարար ներուժ՝ ոչ միայն ապահովելու աշխատաշուկայի պահանջներին համապատասխան կրթություն, այլև իրականացնելու որակյալ հետազոտություններ և լուծելու կոնկրետ խնդիրներ:

Ֆակուլտետում դասավանդում են թվով 5 գիտությունների դոկտոր պրոֆեսորներ, 5 գիտությունների թեկնածու պրոֆեսորներ, 30 դոցենտ, 10 գիտությունների թեկնածու ասիստենտ, 7 ասիստենտ, 24 դասախոս, ունենք 5 հայցորդ:

Հումանիտար գիտությունների ֆակուլտետի անձնակազմն ապահովում է ԵՊՀ Իջևանի մասնաճյուղի վերջին 3 տարվա գիտական և ուսումնամեթոդական 176

հրապարակումներից 140-ի հեղինակները ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական կազմն է: Ֆակուլտետի աշխատակիցները շահել են տարբեր դրամաշնորհների մրցույթներում, ինչպես ներքին, այնպես էլ հանրապետական, որոնց միջոցով հնարավոր է լինում ուսանողներին և երիտասարդ կադրերին ներգրավել հետազոտական գործունեության մեջ:

Բերված ցուցանիշները որակական և քանակական տեսանկյունից դեռ չի կարելի գոհացուցիչ համարել, և մոտակա 5 տարիների ընթացքում անհաժեշտ է բարձրացնել ֆալուլտետի աշխատակիցների գիտական և մանկավարժական հոդվածների տարեկան հրապարակումների թիվը և որակը:

Երկրորդ ռազմավարական նպատակին հասնելու համար առաջարկում ենք հետևյալ գործողությունները:

- Գիտական գործունեության համակարգման բարելավման համապարփակ ծրագրի ներդրում. ֆակուլտետում գիտական աշխատանքները համակարգող աշխատանքային խմբի ստեղծում:
- Հասարակագիտական, սոցիական, հումանիտար մասնագիտությունների **միջգիտակարգային ուղղվածությամբ** նորարարական հետազոտությունների իրականացում:
- Մարզային ներկայացուցիչների հետ իրենց գիտահետազոտական կարիքներները հստակեցնելու համար պարբերական խորհրդակցությունների կազմակերպում:
- Մարզի և տարածաշրջանի առաջնահերթություններին առնչվող կիրառական գիտահետազոտական ծրագրերի իրականացում:
- Միջազգային և հանրապետական ամսագրերում հրապարակումների, հոդվածների թվի աճի ապահովում:
- Դրամաշնորհների՝ ինչպես ներքին, այնպես էլ հանրապետական ու միջազգային մասնակցության դիմումների ավելացում:
- Միջազգային և հանրապետական գիտական հաստատություններ հետ կապերի հաստատում և ընդլայնում՝ համատեղ հետազոտությունների, ծրագրերի, գիտաժողովների կազմակերպում:
- Երիտասարդ գիտնականների ներգրավում, աջակցություն և խրախուսում:
- Ժամանակակից սարքավորումներով հոգեբանական հետազոտությունների կաբինետի ստեղծում՝ ԵՊՀ ԻՄ ներքին միջոցների և տարբեր դրամաշնորհների հաշվին:

- Դասագրքերի, ուսումնական և մեթոդական ձեռնարկների, դասախոսությունների նյութերի ստեղծման խթանում:

3. Համալսարանական միջավայրի շարունակական զարգացում

Ֆակուլտետի երրորդ ռազմավարական նպատակն է միջավայրի և ենթակառուցվածքների համապատասխանեցում համալսարանական շահառու բոլոր խմբերի պահանջներին:

Ֆակուլտետը ունի ենթակառուցվածքների արդիականացման լուրջ խնդիրներ: Նշենք, որ ֆակուլտետը ունի 20 լսարան, 1 համակարգչային սրահ, վարչական և ուսումնական ստորաբաժանումներին հատկացված 6 աշխատասենյակ: 4 լսարան 2024 և 2025 թվականին արդիականացվել է և կահավորվել, ընթացքի մեջ է ևս 1 լսարանի արդիականացում, 12 լսարաններում առկա են համակարգիչ և պրոյեկտոր: Հարկ է նշել, որ այս գործընթացը կրում է շարունակական բնույթ:

Ուրախությամբ ուզում եմ փաստել, որ Ֆակուլտետի պրոֆեսորադասախոսական անձնակազմը ևս ներդրում ունի Ֆակուլտետի նյութատեխնիկական բազայի արդիականացման գործում, մասնավորապես տարբեր դրամաշնորհային ծրագրերով տեխնիկայով զինվել է վերանորոգված 1 լսարան, որը անվանակոչվել է «Պատմություն» կրթական ծրագրի շրջանավարտ, 44 օրյա պատերազմի անմահ նահատակ Շիրակ Գասպարյանի անունով:

Ռուսական տան հետ համագործակցության արդյունքում կահավորվել է 1 լսարան: Օտար լեզուների ամբիոնի երկու աշխատակիցների ջանքներով Ֆակուլտետին շուտով կնվիրաբերվի 2 խելացի գրատախտակ:

Նշենք, որ ևս մեկ խելացի գրատախտակ Ֆակուլտետն արդեն ստացել է նվեր Մայր բուհից:

Մեր ռազմավարական երրորդ նպատակը պատշաճ իրագործելու, արդյունավետ ու անվտանգ դասավանդման և ուսումնառության միջավայր ունենալու համար՝ առաջարկում ենք հետևյալ քայլերը.

- Կրթական ծրագրերի ուսումնական կարիքների վեր հանում և ըստ այդ կարիքների լսարանների տեխնիկական հագեցվածության ապահովում:
- Անհատական և կոլեկտիվ աշխատանքային տարածքների բարեկարգման և կահավորման պլանավորում և ըստ առաջնահերթությունների իրականացման առաջարկների ներկայացում տնօրենությանը:

- Օտար լեզուների դասավանդման արդյունավետությունը բարձրացնելու նպատակով լինգաֆոնային լսարանի ստեղծում:
- Ժամանակակից սարքավորումներով հագեցված մասնագիտացված լսարանների և ուսումնական լաբորատորիաների ստեղծում՝ ԵՊՀ ԻՄ ներքին միջոցների և տարբեր դրամաշնորհների հաշվին:
- Լսարանների, ուսումնական և գիտական կաբինետների կահավորում ուսումնական գործընթացի ժամանակակից սարքավորումներով ու տեխնիկական միջոցներով,
- Ֆակուլտետի սանհանգույցների վերանորոգում և քանակի ավելացում, դասախոսական կազմի համար սանհանգույցի առանձնացում,
- Գրադարանային ֆոնդի համալրում, մասնագիտական գրականության էլեկտրոնային շտեմարանների ստեղծում:

4. Մարդկային ռեսուրսների զարգացում

Ֆակուլտետի 4-րդ ռազմավարական նպատակն է՝ մարդկային ռեսուրսների զարգացումը և համալրումը:

Մարդկային ռեսուրսների շարունակական զարգացումը ինչպես Մասնաճյուղի, այնպես էլ Ֆակուլտետի ռազմավարական կարևորագույն դրույթներից է: Ֆակուլտետը, մասնավորապես, պետք է կարևորի մարդկային ռեսուրսների մասնագիտական, մեթոդաբանական, կազմակերպչական և հաղորդակցման հմտությունների զարգացումը:

Ֆակուլտետում առկա մարդկային ռեսուրսի զարգացմանը զուգահեռ անհրաժեշտ է նաև աշխատակազմի համալրումը նոր որակյալ կադրերով:

Ավելի քան ակնհայտ է, որ որակյալ կրթական ծրագրեր մատուցելու համար անհրաժեշտ է ունենալ բարձրորակ կադրեր և ապահովել այդ կադրերի կայությունը, որի համար անհրաժեշտ է ավելացնել Մասնաճյուղի դասախոսների կայությունն ապահովող մեխանիզմները:

Հումանիտար գիտությունների ֆակուլտետը ունի մարդկային բավարար ներուժ՝ ապահովելու աշխատաշուկայի պահանջներին համապատասխան կրթություն, իրականացնելու որակյալ հետազոտություններ և լուծելու կոնկրետ խնդիրներ: Ֆակուլտետի անձնակազմը ՀՀ և տարբեր երկրների բուհերի և գիտական կենտրոնների հետ համագործակցության մեծ փորձ ունի, ինչը հնարավորություն է տալիս ֆակուլտետում գործող կրթական ծրագրերը իրականացնել բարձր մակարդակով:

Ֆակուլտետում դասավանդող դասախոսների միջին տարիքը 53.5 տարի է:

Սահուն սերնդափոխություն իրականացնելու համար անհրաժեշտ է ներգրավել երիտասարդ կադրերի, որը, կարծում ենք, կարևորագույն քայլերից մեկն է լինելու: Դասախոսական կազմի երիտասարդացման հարցում լրջագույն խնդիրը ֆինանսական գրավչություն է, քանի որ բանիմաց ու խոստումնալից երիտասարդները ձգտում են աշխատել ավելի բարձր վարձատրություն ունեցող կառույցներում: Ներկայումս մասնակի լուծումներից է ժամավճարով երիտասարդների ընդգրկումը մեկ կամ երկու դասընթացի շրջանակում՝ մասնագիտական դասընթացները ավելի որակով իրականացնելու համար: Նախատեսվում է ֆակուլտետի ուսանողների ավարտական աշխատանքները, մագիստրոսական թեզերը և պրակտիկաները իրականացնել ոլորտային կազմակերպություններում:

Ռազմավարական 4-րդ նպատակի արդյունավետ իրագործման համար առաջարկում եմ հետևյալ քայլերը.

- Պրոֆեսորադասախոսական, ուսումնաօժանդակ և վարչական անձնակազմի կարիքների գնահատման վրա հիմնված վերապատրաստումների իրականացում:
- Դասավանդման ժամանակակից մեթոդների տիրապետող կադրերի համալրում, բարձրորակ կադրերի համար շարունակական վերապատրաստումների կազմակերպում:
- Պրոֆեսորադասախոսական կազմի մանկավարժական կարողությունների և հմտությունների զարգացմանն ուղղված պահանջների պարբերական վերանայում, դասավանդման ու ուսումնառության գործընթացների արդիականացում:
- Առաջավոր փորձի խրախուսման և տարածման ներմասնաճյուղային մեխանիզմների զարգացում, գիտակրթական գործընթացներում ժամանակաից մեթոդների և տեխնոլոգիաների ներդրման խթանում,
- Հրավիրյալ պրոֆեսորի ինստիտուտի զարգացում:
- Մարդկային ռեսուրսների կառավարում՝ աշխատակազմի որակավորման բարձրացում վերապատրաստումների միջոցով, արդյունավետ աշխատանքի խրախուսում, ոլորտային առաջատար մասնագետների ներգրավում:
- Երիտասարդ դասախոսների համար մենթորության ինստիտուտի լավարկում:
- ԵՊՀ դասախոսական կազմի գործունեության բազմագործոն գնահատման կարգի ներդրում բոլոր ամբիոններում:

- Ուսանողական կազմի հետ դասավանդման արդյունավետության վերաբերյալ հետադարձ կապի ստացման մեթոդների բազմազանեցում (կանոնավոր ֆոկուսխմբային հետազոտություններ, խորքային հարցումներ և այլն):
- Միջազգային շարժունության ծրագրերում դասախոսների մասնակցության ակտիվացման ուղղությամբ աշխատանքների իրականացում:

5. Հասարակության հետ տարվող աշխատանքներ և մատուցվող ծառայություններ

Ֆակուլտետը իր ռազմավարական նպատակներից մեկն է համարում նաև մարզի համայնքի հետ ինտեգրումը և ներդաշնակեցումը, կարևորելով ծառայությունները հասարակությանը՝ որպես իր սոցիալական պարտավորություն:

Արտաքին և ներքին շահակիցների հետ արդյունավետ հաղորդակցության միջոցով հնարավոր է ապահովել դիմորդների կայուն հոսքը, բարեփոխումների և ծրագրերի իրագործման համար անհրաժեշտ ռեսուրսները, ինչպես նաև կրթական ու գիտահետազոտական բովանդակության համապատասխանությունը հասարակության, պետության պահանջներին:

Ֆակուլտետի հանրային հանձնառության տեսանկյունից կարևոր է կրթության և գիտության հանրահռչակումը: Այս տեսանկյունից անհրաժեշտ է զարգացնել ֆակուլտետի հաղորդակցման գործիքները և ընդլայնել համագործակցության տեղական և հանրապետական լրատվամիջոցների հետ:

Արդյունավետության կարևորագույն ցուցիչներից է նաև ստեղծած մտավոր արդյունքի կիրառելիության ապահովումը, որի համար սկզբունքային է պետական, մասնավոր և հասարակական ոլորտների գործընկերների հետ ակտիվ համագործակցությունը:

Շատ կարևոր է նաև ֆակուլտետի շրջանավարտների հետ տարվող աշխատանքները:

Ռազմավարական այս նպատակը արդյունավետ իրականացնելու համար առաջարկում ենք հետևյալ գործողությունները.

- Աշխատաշուկայի զարգացման միտումների և պահանջարկի պարբերական ուսումնասիրության իրականացում:
- Աշխատաշուկայի գործընկերների ցանցի ընդլայնում, բուհ-աշխատաշուկա կապի ամրապնդում:

- Շրջանավարտների համախմբում, շրջանավարտների համայնքի իրազեկման և ներգրավման ձևաչափերի ու մեխանիզմների լրամշակում և գործարկում:
- Շրջանավարտների ներգրավմամբ ծրագրերի իրականացում, հովանավորների հայթայթում՝ լրացուցիչ ֆինանսական հոսք ապահովելու համար
- Գործընկեր լրատվամիջոցների հետ համագործակցությամբ տեղեկատվական նախագծերի իրագործում:
- Հրապարակային դասախոսությունների, վարպետության դասերի կազմակերպում՝ ոլորտային պրակտիկ մասնագետների ներգրավմամբ:
- Լրացուցիչ ծրագրերի մշակում և իրագործում ֆակուլտետի կադրային ներուժի միջոցով.
  - ✓ մասնավորապես նախադպրոցական ուսումնական հաստատությունների մանկավարժական աշխատողների վերապատրաստող կազմակերպության մրցույթին մասնակցություն,
  - ✓ հանրակրթական ուսումնական հաստատության ղեկավարման իրավունք ստանալու նպատակով վերապատաստման և վերապատրաստող կազմակերպություն դառնալու մրցույթին մասնակցություն,
  - ✓ քաղծառայողների համար հոգեբանական վերապատրաստումների կազմակերպում:
  - ✓ Հանրապետական մանկավարժահոգեբանական կենտրոնի հետ համատեղ ծրագրերի իրականացում
- ԵՊՀ ԻՄ հաշվետվողականության և կառավարման համակարգերի կատարելագործում ու արդյունավետության բարձրացում՝ ՌԾ իրականացման գործում ներգրավված պատասխանատուների դերերի և գործառույթների անհատականացման միջոցով:
- Լրացուցիչ կրթական և խորհրդատվական ծառայությունների վերաբերյալ հասարակության տարբեր խմբերի և տնտեսվարողների շրջանում իրազեկման միջոցառումների իրականացում:
- Լրացուցիչ կրթական և խորհրդատվական ծառայությունների շուկայի ուսումնասիրման և շահառուների կարիքների բացահայտման մեխանիզմների գործադրում:

- Լրացուցիչ կրթական և խորհրդատվական ծառայությունների արդյունավետության և արդիականության գնահատման ներքին և արտաքին մեխանիզմների մշակում:
- Լրացուցիչ կրթական և խորհրդատվական ծառայություններից ստացվող եկամուտների ավելացման համար բիզնես և մարքեթինգային ծրագրերի իրականացում:

6. Ուսանողական կառույցների հետ համագործակցություն

Ֆակուլտետի ղեկավարությունը կարևորում է ուսանողական կառույցների՝ ՈՒԳԸ և ՈՒԽ հետ համագործակցությունը: Ուսանողական կառույցների ներկայացուցիչները ներգրավված են ֆակուլտետի կառավարման մարմիններում և մասնակցում են որոշումների կայացման գործընթացին:

Ակտիվ ուսանողական կյանքը, հասարակական աշխատանքներում ներգրավվածությունը, մասնակցությունը տարաբնույթ միջոցառումներին՝ նպաստում են ուսանողների կազմակերպչական, հաղորդակցման ունակությունների, ինչպես նաև պատասխանատվության զարգացմանը, որոնք նրանց հետագա հաջողությունների կարևոր գրավականներից են: Չափազանց կարևոր է, որ ֆակուլտետի ուսանողները ունենան ակտիվ և բովանդակալից ուսանողական կյանք: Ֆակուլտետի ուսանողական կյանքի աշխուժացման տեսանկյունից առաջարկում ենք հետևյալ գործողությունները.

- Ուսանողների կարիքների վերհանման մեխանիզմների և քաղաքականության լավարկում:
- ՈՒԽ և ՈՒԳԸ նախաձեռնությունների աջակցում
- ՈՒԳԸ ծրագրերի զարգացում. նպաստել ուսանողների հետազոտական աշխատանքների արդյուավետության բարձրացմանը, ընդլայնել ծրագրերում ուսանողների ակտիվ մասնակցությունը:
- Ուսանողական տարբեր կառույցների կողմից տարբեր խմբակների, ակումբների ձևավորման ու ակտիվ գործունեության խրախուսում:
- Ուսանողական օլիմպիադաների, մասնագիտական խաղերի, վիքիճամբարի կազմակերպում:
- Ուսանողական ամառային և աշնանային դպրոցների կազմակերպում:
- Ուսանողների համար լրացուցիչ պարապմունքների կազմակերպում: